# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի
## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի փետրվարի 11-ին ժամը 16:00-ին քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշոտցի 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 11 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող, իրավաբանական բաժնի պետ Կարինե Եսայանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով 30 րոպեի ընթացքում չեն ներկայացել ավագանու անդամների ՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 3-րդ մասով, նիստ վարողը հայտարարեց նիստը չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի փետրվարի 11-ին ժամը 16:35-ին: